Ֆադեյ Տաճատի ՍԱՐԳՍՅԱՆ



Հայ ժողովուրդը ծանր կորուստ կրեց. հունվարի 10-ին կյանքի 87-րդ տարում հանկարծամահ է եղել պետական ու հասարակական ականավոր գործիչ, գիտնական ու կազմակերպիչ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պաշտոնաթող գեներալ-մայոր Ֆադեյ Տաճատի Սարգսյանը:

Նրա բազմաբովանդակ կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված էին մեր երկրի զարգացման, պետականության ամրապնդման, հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտների կայացման հետ:

Ֆադեյ Սարգսյանը ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում:

1940-1942 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, այնուհետև ուսումը շարունակել և 1946 թ. գերազանցությամբ ավարտել է Լենինգրադի Ս. Բուդյոննու անվան կապի ռազմական էլեկտրատեխնիկական ակադեմիան: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1946-1958 թթ. աշխատել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրթիռա-հրետանային գլխավոր վարչության գիտատեխնիկական կոմիտեում՝ վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ: Այդ տարիներին նա անմիջական մասնակցություն է ունեցել խորհրդային զինված ուժերի համար ռադիոլոկացիոն սպառազինության ստեղծման, արտադրության կազմակերպման և ներդրման աշխատանքներին:

1958-1959 թթ. Ֆ. Սարգսյանը եղել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ավագ ռազմական ներկայացուցիչ պաշտպանական մի շարք գործարաններում, իսկ 1959-1963 թթ.՝ ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում (ԵրՄՄԳՀԻ): 1963 թ. նշանակվել է ԵրՄՄԳՀԻ-ի գլխավոր ճարտարագետ, իսկ 1963-1977 թթ. վարել է այդ հաստատության տնօրենի պաշտոնը:

Մեծ է Ֆադեյ Սարգսյանի դերը գիտատեխնիկական այնպիսի նոր ուղղության ձևավորման գործում, ինչպիսին է ԵրՄՄԳՀԻ-ի աշխատանքների նպատակամղումը դեպի ռազմական կիրառման ավտոմատացված կառավարման համակարգերի մշակումը: Նրա ջանքերի շնորհիվ Հայաստանի գիտատեխնիկական ներուժը ներգրավվեց ԽՍՀՄ պաշտպանության համար առանցքային նշանակություն ունեցող ամենաբարդ հիմնախնդիրների լուծմանը:

Գիտնականի ու կազմակերպչի նախաձեռնությամբ, ղեկավարությամբ և անձնական մասնակցությամբ մշակվեցին և արտադրության մեջ ներդրվեցին «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրական հաշվիչ մեքենաներ, որոնք ամենալայն կիրառումը գտան ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում:

1977-1989 թթ. Ֆադեյ Սարգսյանը վարել է Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի բարձր պաշտոնը: Գլխավորելով հանրապետության կառավարությունը, նա հսկայական կազմակերպչական տաղանդ ու մեծ ջանքեր է ներդրել մեր երկրի արդյունաբերության առաջատար ճյուղերի, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, կապի, մշակույթի, գիտատեխնիկական ներուժի զարգացման, մեր ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում:

1993-2006 թթ. Ֆադեյ Սարգսյանը գլխավորել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան: Նրա ղեկավարությամբ մեծ աշխատանք կատարվեց ակադեմիայի գիտական գործունեության կազմակերպման, երկրի գիտական ներուժի պահպանման ու զարգացման, միջազգային գիտական համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

2006 թվականից աշխատել է ՀՀ վարչապետի խորհրդական:

Ֆադեյ Սարգսյանը ակտիվորեն մասնակցել է մեր նորանկախ հանրապետության ստեղծման ու կայացման գործին, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման արդար պայքարին, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը:

Ընտրվել է ԽՍՀՄ ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների, ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի պատգամավոր:

Պարգևատրվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով, ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինի, բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով, Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով, արժանացել ԽՍՀՄ պետական երկու և Ուկրաինական ԽՍՀ պետական մրցանակների:

Գիտնականի ու կազմակերպչի նրա վաստակը գնահատվել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան, մի շարք այլ պետությունների ակադեմիաների ու գիտական ընկերակցությունների անդամ ընտրվելով:

Պետական և հասարակական անվանի նշանավոր գործիչ, տաղանդավոր գիտնական ու կազմակերպիչ, հայ ժողովրդի արժանավոր զավակ Ֆադեյ Տաճատի Սարգսյանի պայծառ կերպարը ընդմիշտ վառ կմնա մեր ժողովրդի հիշողության մեջ:

Կառավարական հանձնաժողով